ԱԳԲՅՈՒՐ

ԹԵՂԵՐԻԵՍՄԵԿԵՍ-ԹՐԵԿԵՍ-ԵՐԳԻԾԵՐԵՍԵԿԵՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԵՐԹԱԹԵՐԹ

Աղբիւրի տարեկան բաժանորդագինն է 3—28 կ. իսկ Տարազինը 6 ռուբլի. առանձին Ֆ-ը 25 կ. հասցէն. Тифлисъ. редакція иллюстр. журн. Агбюръ կամ Таразъ. իսկ արտասահմանից՝ Tiflis-Caucase, Rédaction des jour. illustrés Agbur կամ Taraz.

№ 40 կիրակի 20 հոկտեմբերի — երկրորդ տարի — 1891

Ամերիկայի կարմրաւորք Հնդկացիներ.

ՆԱԽՐՆԹԱՅ ՕՐ

(Տուրգենև)

XX

—Մի բոպէ կնձ մօտ արի,—ասաց Բերսէնեվին Շուբինը՝ հէնց որ սա բաժանուեց Աննա Վասիլեվնայից.—ես բան պիտի ցոյց տամ քեզ։ Բերսէնեվը մտաւ Նրա սենեակը։ Այստեղ գարմացած նա տեսաւ բազմաթիւ կաւէ շինուածքներ, փոքրիկ արձանիկներ, որ շարուած էին սենեակի զանազան անկիւններում։

—Ինչպէս տեսնում եմ, դու լաւ աշխատում ես,—ասաց նա Շուբինին։

—Ախը մի՛ բան հարկաւոր է անե՞լ թէ չէ, պատասխանեց Շուբինը։—Մի բանում աջողութիւն չգտար՝ պէտք է միւսը փորձել։ Սակայն ես, որպէս կրօսիկացի, աւելի վրիժառութիւնով եմ զբաղուած, քանի՞թէ—արւեստով։ Frema, Bisonzia!

—Ես քեզ չհասկացայ,—խօսեց Բերսէնեվը։

—Այս բոպէիս... կը հասկանաս։ Դէ՛, բարեհաճեցէք տեսնել եմ վրէժը, համար 1-ին։

Շուբինը բաց արեց մի արձանիկ, և Բերսէնեվի աչքերին ներկայացաւ Ինսարովի կերպարանքը՝ չափազանց նման և հիանալի նրբութեամբ շինուած։ Երեսի գծագրութիւնը բոլորովին ճիշտ էր, և այդ գծագրութեանը տրուած էր մի վսեմ արտայայտութիւն։—ազնիւ, վեհանձն, համարձակ։

Բերսէնեվը գմայլեց։

—Բայց սա սքանչելի՞ է,—կոչեց նա։—Շնորհաւորում եմ, արժէ աշխարհահանդէս տանել։ Ինչո՞ւ այս հիանալի գործը դու վրէժ ես անուանում։

—Նրա համար, սիրելս, որ ես մտադիր եմ, այս, ինչպէս դուք բարեհաճեցիք անուանել, «հիանալի գործը» —նուիրել Ելենա Նիկոլայեվնային, նրա ծննդեանութեան օրը։ Հասկանալի՞ է ձեզ սոյն այլաբանութիւնը։ Մենք կոյր չենք, տեսնում ենք թէ ինչ է կատարւում մեր շուրջը, բայց մենք, որպէս ջենտլմէն, վրիժառու ենք լինում՝ ջենտլմենաբար։

—Իսկ ահա,—աւելացրեց Շուբինը, բաց անելով մի ուրիշ կերպարանք,—որովհետև արւեստագէտը, նորագոյն էստետիքների կարծիքով՝ ունի մի նախանձելի իրաւունք —մարմնացնել իր մէջ ամեն տեսակ գարշելի յատկութիւններ՝ տալով այդ ամենին ստեղծագործական մարգարէի արտայայտութիւն,—ուստի և մենք, այս համար երկրորդ մարգարէները ստեղծագործելիս՝ վրէժ ենք առել ոչ թէ ջենտլմէնաբար, այլ ուղղակի en canaille։

Նա ճարպիկութեամբ յետ քաշեց քաթանը և Բերսէնեվը տեսաւ նոյն Ինսարովի արձանիկը դանդաղեան ճաշակով շինուած։ Աւելի չոր և սրամիտ բան չէր կարելի հնարել։ Երիտասարդ բոլորը ներկայացրած էր այստեղ ոչխարի կերպարանքով, որ յետին ոտների վրայ բարձրացած՝ եղջիւրներով հարւածելու է պատրաստւում։ Անմիտ խրոխտանք, պայծոյթ, յամառութիւն, անճոռնիութիւն, սահմանափակութիւն—ահա թէ ինչ էր կարդացւում այդ «նրբագեղմն մարքիզների վեսայ» ոչխարի երեսին, և, այնուամենայնիւ, Ինսարովի նմանութիւնը այն աստիճան զարմանալի էր, որ Բերսէնեվը չրկարողացաւ պահել իր բարձր ծիծաղը։

—Հ՞ը. զւարճալի՞ է,—խօսեց Շուբինը.—Ճանաչեցիք հերոսին։ Դարձեալ խորհուրդ ես տալիս աշխարհանդէս ուղարկել։ Ոչ, սիրելի եղբայր, այս ինձ համար է, ես ինձ պէտք է նուիրեմ այս՝ իմ սեփական ծննդեան օրը... Ձերդ գերազանցութիւն, թոյլ տուէք ծնկայոք խնդրել... Եւ Շուբինը վեր-վեր ցատկելով մի քանի անգամ, ոտները միմեանց խփեց։

Բերսէնեվը յատակից վեր առաւ քաթանը և գցեց արձանիկի վրայ։

—Ա՜յ դու, մեծամտոգի,—սկսեց Շուբինը.—ով էր պատմութեան մէջ ամենից շատ մեծամտոգին։—Լաւ. այդ թող մնայ։ Իսկ այժմ,—շարունակեց նա, հանդիսաւոր տխրութեամբ ցոյց տալով մի ուրիշ, աւելի մեծ կաւէ զանգուած,—դու կը տեսնես և կը համոզւիս թէ՝ որքան համեստաբարոյ և նախատես է քո բարեկամը։ Դու կը համոզւիս նոյնպէս, որ նա դարձեալ, որպէս ճշմարիտ արւեստագէտ, զգում է իր սեփական ճաշակի պահանջը և օգուտը։

Մարիկ տուր։ Քաթանը վեր թռաւ և Բերսէնեվի առաջ երևացին կաւից շինած երկու կլպած գլուխներ... Նա խիստ չըմբռնեց բանի էութիւնը, սակայն, քիչ նայելով՝ տեսաւ, որ այդ գլուխներից մէկը՝ Աննուշկան էր, իսկ միւսը՝ ինքն, Շուբինը։ Սակայն այդ աւելի ծաղրանկարներ էին, քան թէ իսկական պատկերների քանդակ։ Աննուշկան ներկայացրած էր՝ որպէս մի սիրունատես, գէր աղջիկ՝ նեղ ճակատով, խոշոր, լիքը աչքերով, վեր բարձրացած քթածայրով։ Նրա հատ շրթունքների վրայ խաղում էր մի տեսակ լիրբ ծիծաղ. երեսի արտայայտութիւնը անհոգ էր, վստահ և մատամբ էլ բարի։ Շուբինը երան դուրս էր բերել, որպէս մի մարդ, որ չափազանց անուսակութիւնից նիհարել, չորացել է. Նրա այտերը բոլորովին ներս էին ընկած, անօրէն մազերը թոյլ թափուած էին ճակատի և ականջների վրայ, աչքերը բոլորովին մարած, քիթը՝ մեռելի քթի նման, սրածայր։

Բերսէնեվը զգւելով յետ քաշւեց։—Լաւ զոյգ է, բարեկամս,—խօսեց Շուբինը։—Ձիս բարեհաճի՞՝ մի պատշաճաւոր մակագրութիւն հնարել. առաջին երկուսի համար ես արդէն հնարել եմ։ Կիսարձանիկի տակ պիտի մակագրեմ. «իր հայրենիքի ազատութեան նախանձախնդիր հերոս», միւս արձանիկի տակ՝ «Հեռացէ՛ք, երշիկագործներ», իսկ սրա տակ՝ ինչ ես կարծում. „Արւեստագէտ Պ. Ե. Շուբինի վերջը“—հա՛։

—Լաւը,—պատասխանեց Բերսէնեվը,—արժէ՞ ըղբաղւել այդպիսի... Նա խիստ խօսք չրկարողացաւ գտնել։

—Պղծութիւնով, երևի ուզում ես ասել,—խօսեց Շուբինը։—Ո՛չ, եղբայր, ներողութիւն, իմ շինածների մէջ ամենից շատ այս է արժան աշխարհահանդիսի։

—Ձիշտ որ պղծութիւն,—կրկնեց Բերսէնեվը։—Եւ ինչ չմար բան. քո մէջ ամենևին չկայ այնտեսակ զարգացման սաղմեր, որոնցով, գէթ բանաստաբար, առաստաղին օժտուած են մեր արւեստագէտները։ Դու ինքդ ակնյայտնի կերպով քեզ զրպարտում ես։

—Կարծում ես,—մռայլ խօսեց Շուբինը։—Եթէ այդ սաղմերը իմ մէջ չկան և յետոյ առաջանան, դու լաւ իմացիր, որ պատճառդ մի անձնասրութիւն է ... Դու գիտի՞ս,—աւելացրեց նա, դէմքի ողբերգական արտայայտութեամբ,—ես արդէն սկսել եմ խմել։

—Սուտ ես ասում։

—Փորձել եմ, յանկարծ պարզւեց.— անհամ բան

է մեայն, դժուար է կուլ գնում. իսկ յետոյ գլուխդ գըմբդըմբում է։ Ինքն, մեծ Լուշչիսանը, Մոսկվայի, և, շատերի կարծիքով, Մեծ-Ռուսիայի այդ ճագաւոը, յայտնեց, որ ինձնից բան դուրս չի գալ։ Նրա ասելով՝ մէկ շէշը ինձ բան չի անում։

Բերսէնեվը ուզեց ձեռով խփել կաւէ արձանիկին, բայց Շուբինը չըթողեց։

—Լաւ, եղբայր, մի խփիր. այս մի խրատ կըլինի ինձ համար, որպէս մի խրատվիչակ։

Բերսէնեվը ծիծաղեց։

—Որ այդպէս է, ուրեմն թող մնայ քո խրատվիչակը,—և կեցցէ՛ յաւիտենական, մաքուր արուեստը։

—Կեցցէ՛,—վրայ բերեց Շուբինը։—Նրանում՝ լաւը զովելի է, վատն էլ անվնաս է։

Բարեկամները ամուր սեղմեցին միմեանց ձեռը և բաժանուեցան։

XIX

Առաջին զգացմունքը, որ զգաց Ելենան՝ զարթնելիս՝—այդ ուրախական վախն էր։ „Մի՛թէ“ հարցնում էր նա ինքն իրան անդադար, և նրա սիրտը մարում էր երջանկութիւնից։ Ցիշողութիւնները հեղեղի նման թափուեցին նրա վրայ... Նա խեղդուեց այդ յիշողութեանց մէջ։ Յետոյ կրկին հովանաւորեց նրան առաջուայ երջանիկ, զմայլեցուցիչ խաղաղութիւնը։ Առաւօտեան ընթացքում, նա, քանի գնում՝ սկսում էր աւելի և աւելի տխրել, իսկ հետևեալ օրերը՝ նրա դրութիւնը թէ ծանր և թէ տխուր էր։ Ճշմարիտ՝ այժմ նա գիտէր թէ ի՞նչ էր ուզում, բայց դրանից նա թեթևութիւն չէր զգում։ Ինսարովի հետ ունեցած այն անմոռանալի տեսակցութիւնը վերջնականապէս դուրս գցեց նրան իր հին ճանապարհից, նա էլ չէր կանգնած առաջուան շաւղի վրայ, նա հեռու էր բոլորովին, և, այնինչ՝ ամեն բան, նրա շուրջը, կատարւում էր սովորական եղանակով, ամեն բան իր կարգովն էր գնում. կարծես ոչինչ չէր պատահել։ Առաջուայ կեանքը ընթանում էր առաջուայ եղանակով, դարձեալ սպասելով Ելենայից մերձամտութիւն և մասնակցութիւն։ Օրիորդը փորձեց նամակ գրել Ինսարովին, այդ էլ չաջողուեց. խօսքերը մեռած և անճիշտ էին դուրս գալիս թղթի վրայ։ Նա բոլորովին թողեց իր յիշատակարանը։ վերջին տողի տակ և մի ահագին գիծ քաշեց։ Այդ նրա անցեալն էր, իսկ օրիորդը ներկայումս, իր բոլոր էութիւնով, իր բոլոր հոգով՝ կլանուել, գնացել էր ապագայի մէջ։ Նրա դրութիւնը ծանր էր։ Նստել մօր մօտ,—որը ոչինչ չէր կասկածում նրա մասին—լսել նրա ասածները, սպասասխանել նրան, խօսել հեռը՝—այդ մի տեսակ յանցանք էր համարում Ելենան։ Նա իր մէջ մի տեսակ կեղծիքի հետքեր էր նշմարում, շլոթուում էր, թէև կարմրելու ոչինչ պատճառ չունէր։ Երբեմն նրա մէջ առաջանում էր մի սաստիկ ցանկութիւն՝—ամեն բան խոստովանել առանց մի բան ծածկելու. լինչ էլ որ լինի դրա հետևանքը։ «Ի՞նչ» մտածում էր նա, «մի՛թէ այն օրը Դիմիտրին չտարաւ ինձ իր հետ մատուռից. նա չանցաց, որ ես նրա կինն եմ՝ Աստուծոյ առաջ, հապա էլ ինչու՞ ես այստեղ եմ։» Մէկ էլ նա սկսում էր խորհել բոլորից և, մինչև անգամ Ովսը Իվանովիչից, որ հիմա, առաւել, քան երբ և իցէ տատանում և շարժում էր մատները։ Ներջապատող կեանքը այլ ևս քնքոյշ, սիրելի և, մինչև անգամ երազական չէր թւում Ելենային։ Դիշերային խեղդող տեսիլքի նման՝ այդ կեանքը ճնշում էր Ելենայի կուրծքը, և, կարծես արհամարհում, յանդիմանում, հալածում էր նրան... «Չէ՞ որ դու մերն ես, մե՛ր դարձեալ։» Օրիորդի հովանաւորած խեղճ տանիկները, ճնշուած, հալածուած թռչուններն ու գազաններն անգամ կարծես—նա այդպէս էր զգում,—խորշում էին նրանից, անհաւատարմութեամբ, թշնամաբար էին վերաբերւում դէպի նա։ Խիղճը սկսում էր խայթել Ելենային, նա ամաչում էր իր զգացմունքներից։ «Բայց դարձեալ սա իմ տունն է» մտածում էր նա «իմ ազգականները, իմ հայրենիքը։—Ոչ, ոչ, սա այլ ևս քո հայրենիքը չէ, քո տունը չէ», խօսում էր նրա մէջ մի ուրիշ ձայն։ Սարսափը տիրում էր Ելենային, և նա բարկանում էր՝ յանդիմանում էր իրան այդ թուլասրտութեան համար։ Պատուհասը դեռ նոր էր սկսել, իսկ նա արդէն կորցնում էր իր հոգոյ անվեհերութիւնը... Ա՞յդ էր նա խոստանում։

Նաստ ուշ կարողացաւ նա ինքն իրան տիրել։ Անցաւ մի շաբաթ միւսի հետևից... Ելենան քիչ հանգստացաւ, ընտելացաւ իր նոր դրութեան։ Նա երկու փոքրիկ տոմսակ գրեց Ինսարովին և իր ձեռով տարաւ փոստը. թէ ամօթխածութիւնից և թէ հպարտութիւնից նա չէր կարող հաւատալ ազախնին։ Օրիորդը արդէն սպասում էր Ինսարովի գալուն...

Բայց, Ինսարովի փոխարէն, մի գեղեցիկ առաւօտ յայտնուեց Նիկոլայ Արտեմեվիչը։

XXII

Պաշտօնաթող գվարդիական պօրուչիկ Ստախովի տանը դեռ ոչ ոք չէր տեսել նրան այդպէս թթուած, այդպէս խրոխտ և ինքնավստահ մինչև այն ժամանակ, ինչպէս այդ օրը։ Նա վերարկուով և գլխարկով մտաւ ընդունարան, սկսեց մեծ-մեծ փոխել քայլերը, կրունկները խփելով յատակին։ Մօտեցաւ հայելուն և երկար նայեց իրան՝ մեղմ դառոզութեամբ շարժելով գլուխը և կրծոտելով շրթունքները։ Աննա Վասիլեվնան, արտաքուստ վրդովուած և ներքուստ ուրախ դիմաւորեց նրան։ (Ուրիշ կերպ նա երբէք չէր դիմաւորել իր մարդուն)։ Նիկոլայ Արտեմեվիչը ուշադրութիւն չդարձրեց նրա վրայ, բարև անգամ չտուեց իր կնոջը և միայն լուռ իր „չամշեայ“ ձեռնոցը դէմ արեց Ելենային՝ համբուրելու։ Աննա Վասիլեվնան սկսեց նրա բժշկելու մասին տեղեկութիւն հարցնել.—նա ոչինչ չպատասխանեց։ Ներս մտաւ Ովսը Իվանովիչը։—Նա մի կարճ ուշ տուեց սրան և արտասանեց. „վա՛“։ Առհասարակ նա Ովսը Իվանովիչի հետ սառը և հպարտ էր, թէև ճանաչում էր նրա մէջ՝ «Ստախովների շատ արեան հետքեր»։ Յայտնի է, որ համարեա բոլոր ռուս ազնուականները համոզուած են թէ կան „իրանց առանձին, ցեղական որոշ յատկանիշները“. մեզ շատ անգամ պատահել է „արիստոկրատների“ մէջ գանազան խօսակցութիւններ լսել „քթերի“, ծորձրակների“ այս կամ այն տեսակի մասին։ Ներս մտաւ Զոհան և նստեց Նիկոլայ Արտեմեվիչի դիմաց։ Նիկոլայ Արտեմեվիչը մի խրոխտ ձայն արձակեց կուրծքից, նստեց բազկաթոռի վերայ, մի բաժակ սուրճ պահանջեց և միայն այժմ վեր առաւ գլխարկը։ Նրան սուրճ բերեցին։ Նա խմեց սուրճը և, մտիկ տալով կարգով բոլորի վրայ՝ հազիւ լսելի ձայնով ասաց. „sortez, s'il vous plait“ և, դառնալով կնոջը՝ աւելացրեց. „et vous, madame, restez, je vous prie“։

Ամենքը, բացի Աննա Վասիլեվնայից, դուրս գնացին։ Ցուզմունքից տիկնոջ գլուխը սկսեց դողդողալ։ Նի-

կօլայ Արտեմեվիչի հանդիսաւոր ընդունելութիւնը բոլորովին սրտաբեկ արեց նրան։ Նա մի անակնկալ բանի էր սպասում.

—Ի՞նչ է պատահել,—կոչեց նա, հէնց որ դուռը փակեց Նիկօլայ Արտեմեվիչը, անտարբեր հայեացքով նայեց Աննա Վասիլեվնայի վրայ։

—Առանձին ոչինչ։ Այդ ինչ սովորութիւն է խոյն մի-մի գոհի կերպարանք ընդունելու,—սկսեց նա, անտեղի երկարացնելով լուրաքանչիւր խօսքը։—Ես միայն ուզում էի ձեզ ասել, որ այսօր Ճաշին մեզ մօտ նոր հիւր է լինելու։

—Ո՞վ է։

—Կուրնատովսկի, Եգոր Անդրէեվիչ։ Դուք նրան չէք ճանաչում. Սենատի աւագ քարտուղարն է։

—Նա այսօր մեր տունը պիտի ճաշէ։

—Այո։

—Եւ դուք այդ ինձ ասելու համար բոլորին դուրս ուղարկեցիք.

Նիկօլայ Արտեմեվիչը էլի մի հայեացք գցեց Աննա Վասիլեվնայի վրայ. այս անգամ արդէն՝ հեգնական հայեացք։

—Այդ զարմացնում է ձեզ. դեռ մինք զարմանալ։

Նա լռեց։ Աննա Վասիլեվնան նոյնպէս քիչ լռութիւնից յետոյ խօսեց.

—Ցանկալի կը լինէր...—սկսեց նա...

—Ես գիտեմ, դուք ինձ մինչև «անքարոյական» էք համարել.—յանկարծ խօսեց Նիկօլայ Արտեմեվիչը։

—Ե՞ս,—զարմացած խօսեց Աննա Վասիլեվնան։

—Եւ զուցէ դուք, մասամբ ուղիղ էք։ Ես չեմ ուզում հերքել, որ ձեզ երբեմն տեղիք եմ տուել կասկածելու—(մոնթագոյն ձիւնը... մտածեց Աննա Վասիլեվնան) —Թէև դուք ինքներդ պէտք է համաձայնէք ինձ հետ, որ ձեր, արդէն յայտնի, սահմանափակութեան միջոցին...

—Ես բնաւ ձեզ չեմ մեղադրում, Նիկօլայ Արտեմեվիչ։

—C'est possible, բայց, յամենայն դէպս, ես մասդիր չեմ ինձ արդարացնել. Թող ժամանակը ինձ արդարացնէ. Բայց ես իմ պարտքն եմ համարում հաւատացնել ձեզ, որ ես ճանաչում եմ իմ պարտականութիւնները, գիտեմ հոգս տանել... ինձ... ինձ յանձնուած ընտանիքի մասին։

—„Ի՞նչ է նշանակում այս տունը", մտածում էր Աննա Վասիլեվնան։

(Նա չէր կարող գիտենալ, որ անցեալ երեկոյ անգլիական կլուբում վէճ առաջացաւ այն մասին թէ ռուսները ճառախօսութեան ընդունակութիւն չունին։ «Ո՞վ գիտէ մեզանում խօսել. տէր մէկի անունը»—կոչեց վիճողներից մինը։—Ա՜յ, հէնց Սատլովը, օրինակի համար, պատասխանեց միւսը, մատնացոյց անելով Նիկօլայ Արտեմեվիչի վրայ, որ այդտեղ կանգնած էր և բաւականութիւնից քիչ մնաց ճչաց։)

—Օրինակ,—շարունակեց Նիկօլայ Արտեմեվիչը՝—իմ դուսար, Ելէնան։ Դուք չգիտէք զգում, որ արդէն ժամանակ է նրան հաստատ հողի վրայ կանգնել... մարդու դնալ՝ ուզում եմ ասել։ Այդ բոլոր նրա մտորմունքները և մարդասիրական զգացմունքները շատ լաւ են՝ որոշ չափով, որոշ հասակի համար։ Կարծեմ, որ ժամանակ է արդէն դուրս գալ այդ անոյշ, խաստակոն դրութիւնից, Թողնել դանդաղ արեւստագէտները, աշակերտները և ինչ-որ զարդարդիներն ու ուրիշների նման, մարդ դառնալ։

—Ի՞նչպէս պէտք է հասկանալ ձեր խօսքերը,—հարցրեց Աննա Վասիլեվնան։

—Ահա, բարեհաճեցէք լսել—պատասխանեց Նիկօլայ Արտեմեվիչը՝ առաջուայ պէս խօսքերը երկարացնելով։—Ես պարզը կասեմ, առանց տատանուելու. այդ երիտասարդ Կուրնատովսկու հետ ծանօթացել եմ այն նպատակով, որ նրան իմ փեսայ շինեմ։ Համարձակվում եմ կարծել, որ դուք, նրան տեսնելով՝ ինձ չէք մեղադրել կողմնապահութեան և անզգոյշ եզրակացութիւններ անելու մէջ։ (Նիկօլայ Արտեմեվիչը խօսում և պարծանում էր իր պերճախօսութիւնով։) Հիանալի ուսման տէր—նա իրաւաբան է,—վարվողութիւնը գեղեցիկ, երեսուն երեք տարեկան, աւագ-քարտուղար, Կօլէժսկի սովէտնիկ, Ստանիսլաւը շինքին։ Ցոյս ունիմ, որ դուք կը հաւանէք ինձ այս բանում, որ ես նման չեմ այն տեսակ pères de comedie—նեղին, որոնք միայն չինեղով, աստիճաններով են գրաււում։ Բայց դուք ինքներդ ինձ ասել էք, որ Ելէնա Նիկօլայեվնային դուր են գալիս գործնական, գրական մարդիկ։—Եգոր Անդրէեվիչը, իր տարիքում առաջին գործիչն է։ Հիմա միւս կողմից. իմ դուստրը հակումն ունի զանազան մեծահոգութիւններ անելու.—իմացած եղէք, որ Եգոր Անդրէեվիչը հէնց որ մեջտեղ է ճարել՝—դուք ինձ հասկանում էք, իր ուռճիկով՝ առանց կարիքի՝ ապրելու միջոց—իսկոյն, յոգուտ իր եղբայրների, հրաժարուել է այն գումարից, որ նա ստանալու էր իւրաքանչիւր տարի։

—Իսկ ո՞վ է նրա հայրը,—հարցրեց Աննա Վասիլեվնան։

—Նրա հայրը. նրա հայրը դարձեալ, իր տեսակով մի նշանաւոր մարդ է. ամենամաքուր բարոյականութեան տէր անձն է, un vrai stoïcien, պաշտօնաթող՝ կարծեմ որ մայոր է. այժմ կառավարում է կոմս Բ...ի բոլոր կալուածքները։

—Ա՜հ,—ձայն տուեց Աննա Վասիլեվնան։

—Ա՜հ, ինչ. ա՜հ,—վրայ բերեց Նիկօլայ Արտեմեվիչը։—Զլինի դուք էլ նախապաշարմունքներով էք վարակուած։

—Բայց ես ոչինչ չասացի,—խօսեց Աննա Վասիլեվնան։

—Ո՞չ, դուք ասացիք. ա՜հ... Յամենայն դէպս՝ ես հարկաւոր համարեցի նախապատրաստել ձեզ իմ մտածողութեան եղանակի մասին և համարձակւում եմ կարծել... համարձակւում եմ յուսալ, որ պ. Կուրնատովսկին գրկաբաց ընդունելութիւն կը գտնի—à bras ouverts. Նա մի որ և է պարտադրող չէ։

—Ի հարկ է. միայն հարկաւոր է խոհարար Վանկային հրամայել, որ կերակուրների տեսակն աւելացնէ։

—Ձեզ յայտնի է, որ այդ բաների մէջ ես չեմ խառնուում,—ասաց Նիկօլայ Արտեմեվիչը, վեր կացաւ դէպքը ծածկեց, և, շվայտնելով՝ (նա մի մարդուց լսել էր, որ շվայտնել կարելի է՝ մէկ իր ամարանոցում, մէկ էլ՝ ձիավարժութեան ժամանակ։) դուրս գնաց պարտէզ զբօսնելու։ Շուրջինը իր սենեակի լուսամուտից տեսաւ նրան և լեզուն դուրս հանեց։

Ժամը չորսից տասը րոպէ պակաս Սատլովենց տան դրանը մօտեցաւ մի կառք, որի միջից դուրս գալով մի նրբակազմ, սպրդ և կոկիկ հագնուած երիտասարդ, հրամայեց յայտնել իր մասին։ Այդ Եգոր Անդրէեվիչ Կուրնա-

Կարս-Պոլոզաեան խրախճանքը.

տօվսկին էր։

Ահա թէ Ելէնան հետևեալ օրը, և մինչև այլոց ինչ էր գրում Ինսարովին։ Ինձ շնորհաւորիր, սիրելի Դիմիտրի,—ես վիեսայ ունիմ։ Երեկ նա մեզ մօտ Ճաշեց. հայրիկս, կարծեմ անգլիական կլուբում ծանօթացել է նրա հետ և Ճաշի էր հրաւիրել։ Ի հարկ է՝ երեկ նա իրրև վիեսայ չէր եկել։ Բայց բարեսիրտ մայրիկս, որին արդէն հայրս յայտնել էր իր ապագայ յոյսերը՝—ականջիցը փսխուց թէ այդ ինչ հիւր է։ Նրա անունն է Նադոր, հայրանունը Անդրէյեվիչ, ազգանունը Կուրնատովսկի։ Վարում է սենատում աւագ-քարտուղարի պաշտօն։

Նախ քեզ կը նկարագրեմ նրա արտաքին կերպարանքը։ Նրա հասակը բարձր չէ—քեղանից կարճ է, լաւ կազմուածք ունի, երեսի գծագրութիւնը կանոնաւոր, մազերը կարճ խուզած, և մօրուքը մեծ՝ երկուսի բաժանուած։ Աչքերը մանր են (քո աչքերի նման), շագանակագոյն, արագաշարժ. շրթունքները հարթ և լայն։ Թէ աչքերը և թէ շրթունքները միշտ արտայայտում են մի տեսակ պաշտօնական ժպիտ. կարծես նրան հսկում է այդ ժպիտը։ Նա իրան շատ հաստատակ է պահում, խօսակցութիւնը պարզ և կանոնաւոր է,—ամեն բան կանոնաւոր է նրանում։ Նրա մանդալը, ծիծաղելը, ուտելը—կարծես մի-մի դորձ լինին նրա համար։ «Ի՞նչպէս ուսումնասիրել է»—գուցէ այժմ դու մտածես, այո, որպէս զի քեզ պատմեմ այդ բոլորը։ Եւ ինչպէս չուսումնասիրել իր վիեսային։ Նրա մէջ ես նկատեցի մի տեսակ երկաթի ամրութիւն... որ, միևնոյն ժամանակ եւ բութ, եւ դատարկ, եւ ազնիւ է. իրաւ, ասում են, որ նա շատ ազնիւ մարդ է։ Դու էլ երկաթի նման ամուր ես, բայց քոնը՝—ուրիշ է։ Ճաշի ժամանակ նա իմ կողքին էր նստած, իսկ մեր դէմ—Շուբինը։ Առաջ խօսք ընկաւ մի ինչ-որ վահառականական ձեռնակութեան մասին։ Ասում են, որ նա լաւ է հասկանում այդ բաները և, մի անգամ, դեռ ուզեցել է պաշտօնը թողնել մի մեծ դորձարան բաց անելու համար—ախտս լաւ չէ հասկացել... Շուբինը յեռոյ խօսեց Թատրոնի մասին. այստեղ Կուրնատովսկին յայտնեց՝—և այդ, Ճիշտն ասած՝ առանց որ և է կեղծ համեստութեան՝—որ ինքը գեղարուեստից բան չի հասկանում։ Այդ լսելիս՝ ես մտաբերեցի քեզ... «Բայց», մտածում էի ես, ոչ «դարձեալ՝ իմ և Դիմիտրիի բան չհասկանալը՝ գեղարուեստից.—ուրիշ տեսակ է»։ Սա կարծես ասում լինի. «ես չեմ հասկանում գեղարուեստը, և այդ մի հարկաւոր բան էլ չէ, թէև բարեկարգ երկրներում թոյլ է տրուած»։ Սակայն նա բաւական անտարբեր է դէպի Պետերբուրգը և, առհասարակ, դէպի comme il faut. Նա դեռ մի անգամ՝ պրօֆեսորից անուանեց իրան։ Մենք, ասում է, հասարակ բանւորներ ենք։ Ես մտածեցի. եթէ այդ խօսքերը ասէր Դիմիտրին, — ինձ դուր չէր գալ. բայց սա թող խօսի, թող պարծենա իր համար։ Ինձ հետ նա սաստիկ քաղաքավար էր, բայց միշտ ինձ թւում էր թէ ես խօսում եմ մի շատ և շատ ներողամիտ մեծաւորի հետ։ Երբ մէկին նա ուզում է դուվել, ասում է, որ այս ինչ մարդը կամոներով է առաջնորդւում,—այդ նրա սիրելի խօսքն է։ Դուցէ նա ինքնուրոյն է, աշխատասէր է, ընդունակ անձնազոհութիւն անելու (Դու տեսնում ես՝ որքան անկողմնապահ եմ) այսինքն՝ իր շահերը զոհելու, - բայց նա մի մեծ բռնակալ է։ Մարդ թող չընկնի նրա ձեռը։ Ճաշի վրայ խօսեցին կաշառակերութեան մասին...

—Ես գիտեմ,—ասաց նա,—որ շատ անգամ կաշառակերը ինքը մեղաւոր չէ. նա ուրիշ կերպ չի կարող վարուել։ Բայց դարձեալ եթէ բռնուեց հարկաւոր է նրան ճմլել։

—Ճմլել անմի՞ջին,—բացականչեցի ես։

Այո, սիգկունքի համար։

—Ո՞ր սիգզունքի,—հարցրեց Շուբինը։

Կուրնատովսկին շփոթուեց, զարմացաւ ու ասաց.—այդ աւելորդ է բացատրել։ Հայրիկս, որ կարծես երկրպագում է նրա առաջ՝ աւելացրեց իր կողմից թէ իրաւ որ աւելորդ է, և այդ խօսակցութիւնը, հակառակ իմ ցանկութեան, ընդհատուեց։ Երեկոյեան եկաւ Բերսէնեվը և նրանց մէջ սաստիկ վէճ ծագեց։ Ես ոչ մի ժամանակ չէի տեսել մեր բարեսիրտ Անդրէյ Պետրովիչին այդպէս վրդովւած։ Պարոն Կուրնատովսկին չէր մերժում ոչ գլուխթեան, ոչ համալսարանի օգուտը... բայց ես հասկանում էի Անդրէյ Պետրովիչի վրդովման պատճառը.—Կուրնատովսկին այդ ամենի վրայ նայում է մի տեսակ վարժութեան, մարմնամարզութեան տեսակէտից։ Ճաշից յետոյ՝ Շուբինը մօտեցաւ ինձ և ասաց. տեսէք սա և այն մեւսը. (քո անունը նա չի կարող տալ)—երկուսն էլ գործնական մարդիկ են, բայց որքան տարբերութիւն կայ նրանց մէջ։ Այնտեղ կենդանի, իրական, կեանքից դուրս եկած խրգէալ, իսկ այստեղ՝ ոչ գոնէ պարտաճանաչութեան զգացմունք,—պաշտօնական ազնիւթիւն և անբովանդակ, անմիտ գործնականութիւն։ Շուբինը խելացի է, և ես մեստս պահեցի քեզ համար՝ նրա խելացի խօսքերը։ Իսկ եթէ ինձ հարցնես.—ի՞նչ համեմատութիւն չեր մէջ։ Դու հատատ ունես, բայց նա ոչ, որովհետև ինքն իր մասին հաւատ ունենալ չի կարելի։ Նա ուշ գնաց, բայց մայրիկս դարձեալ ժամանակ գտաւ ինձ հաղորդել, որ ես դուր եմ եկել նրան, որ հայրս հիացման մէջ է... Չլինի՞ նա ինձ համար էլ ասել է, որ կանոնիերով եմ առաջնորդւում։ Ես քիչ մնաց՝ ասէի մօրս թէ՝ սիրելի մայրիկ, շատ ախտս, որ ես արդէն ամուսնի ունեմ։

Ինչու հայրս այդպէս չի սիրում քեզ։ Մայրիկիս բանը էլի հեշտ էր...

«Ո՞հ, սիրելիս. այդքան հեռաքքքրութեամբ նկարագրեցի ես այդ պարոնին, որպէս զի խլացնեմ իմ վիշտը։ Առանց քեզ իմ կեանքը սև է, ես անդադար երևակայում եմ քո պատկերը, լսում եմ քո ձայնը... Ես պատասում եմ քեզ, միայն ոչ թէ մեր տանը, ինչպէս դու էիր կամենում,—երևակայիր թէ որքան ծանր և անյարմար կը լինէր այնտեղ,—այլ իմ ասած տեղը, ծառաստանի մէջ...

Սիրելիս, սիրելիս... Ինչպէս սիրում եմ քեզ։"

Ն. ՂԱԶԱՐԵԱՆ

(Կը շարունակուի։)

ՍՐՏԻՍ ԻՂԶԸ

Ա՜խ, ինձ ցաւ է փափուկ մանչում
Տեսնել մահն իմ առաջ,
Տխուր լաւէր իմ սենեակում,
Բարեկամաց լաց հառաչ։

Ունայն փառքով չեմ կամենում
Վերջին պատիւ ինձ տային,
Երբ մոռացած այս երկրում
Պիտի յանձնեն սեւ հողին...

Բայց կուզէի զէթ մի անգամ
Ազատ դաշտում կուէի,
Եւ վիրաւոր արիւնաքամ
Հանգիստ մահին զրկէի...

ՍԵՐԳՕ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՃՈՅՈՒԹԻՒՆԸ *

IV

Մանուկը ամենքի համար էլ այժմ հոգացողութեան առարկայ է, մանուկի հոգու ու մարմնի դաստիարակութեան հարցը մինչ հրապուրանքի է այժմ հասած։ Ամենքն էլ ցանկանում են, որ մանուկը աշխատէ ուսում առնէ և միևնոյն ժամանակ մոռանում են նրա առողջապահական պահանջողութիւնները բաւականացնել։ Մենք այդ պահանջողութիւնների մասին հասկացողութիւն չունինք — ահա այդ է չարիքի պատճառը։

Մայրը տեսնում է, որ իր սիրելի մանուկը առանց որ և իցէ պատճառի նեղվում է, մաչում է. հրաւիրուած բժիշկը ոչ մի օրգանական հիւանդութիւն չէ գտնում, կաղդուրիչ բժշկական միջոցները չեն օգնում. մանուկը շարունակում է թոյլ մնալ, տեսքը մռայլ ձև է ստանում։ Եւ ահա իբրև կաղդուրիչ միջոց մարմնամարզութեան են դիմում, բոլոր յոյսը մարմնամարզութեան մէջն են տեսնում։ Բայց որպիսի մարմնամարզութիւն։ Միևնոյն է, ինչ տեսակ էլ որ լինի, միայն մարմնամարզութիւն լինի, այնքան որ մանուկը մինչև հոգնելն շարժողութիւններ գտարարի։ Ի հարկէ ընտրում են մարմնամարզութիւնից ամենահասարակը, որ հեշտութեամբ կարելի լինի կատարել։ Ահա ընտրում են սենեակի մարմնամարզութիւնը, իր թօկերով, իր գնդակներով և այլն, և կամ ստիպում են մանուկին սրահաղութեամբ (фехтованіе) զբաղել, եթէ այդ էլ չի օգնում, առաջարկում են մաքուր օդի մէջ զբօսնելն։

Չընայելով այդ միջոցների գործադրութեանը՝ մանուկը չէ առողջանում, ախորժակը չէ բաւանում, մանուկը թէպէտ և աւելի լաւ է քնում, բայց երեսի գոյնը չարունակ դունատ է մնում ու տեսքը մռայլ։ Այդպիսի վարժողութիւնները ու զբօսանքը օգուտ չեն տալիս, մանուկը երեում է թոյլ, հոգնած և դէմքով տխուր։ Մթթէ զարմ չէ, որ ձեր մանուկը ձանձրութիւն է զգում։ Մթթէ հաճոյութիւն կարող է պատճառել ձեր կարծեցեալ իբր կատարեալ դաստիարակութիւնը։ Մի՞թէ նա բաւականութիւն պէտք է զգայ մարմնամարզութեան և սրահաղութեան դասերից, երբ լարում է նրա ուշադրութիւնը, և բոլոր շարժողութիւններն էլ պէտք է կանոնաւոր կատարուին, մի առ մի չափաւորուած լինին։ Եւ կամ դուք կարծում էք, որ մանուկը իր մօր հետ զբօսնելով պէտք է բաւականութիւն զգայ, նրա կազմուածքը կաղդուրի, ուրախութեան ազդեցութիւնից ջղային ոյժի էներգիան աւելանայ։ Ո՛չ։ Որքան էլ որ մայրը ցանկանայ, այնուամենայնիւ նա չէ կարող մանուկի բնածին ձգտմանը յարմարուել, նա չէ կարող մանուկի հետ զբօսնելու ժամանակ վազել, խաղալ, նա մանուկ չէ կարող դառնալ և ահա զբօսնելն էլ բժշկական խորհուրդների պէս ճիշտ խստութեամբ է կատարուում։

Բայց մանուկը առողջութեան համար է զբօսնում, և ոչ թէ ուրախութեան։ Կարծես թէ առողջութիւնը և ուրախութիւնը կարելի է միմեանցից բաժանել։

Ձեր մանուկը տաղտկութիւն, ձանձրութիւն է զգում, ահա բոլոր չարիքների պատճառը։ Թուլացրէք փոքր ինչ ձեր վերին աստիճանի հսկողութիւնը, ձեր չափազանցրած զգուշութիւնը, որ ստիպում է ձեզ մանուկին պահել ձեր մօտ և ուսուցիչների հասարակութեան մէջ։ Թոյլ տուէք մանուկին փոքր ինչ խաղայ այդիում միւս մանուկների հետ ի միասին, թոյլ տուէք նրան մինչև անգամ հրապարակներում աղաղակ բարձրացնող մանուկների խաղերին մասնակցելու։ Թող նա այդպիսի մանուկների խաղերի ճաչակին ընտելանայ, որոնք թէպէտ և այնքան էլ կանոնաւոր չեն, ինչպէս մարմնամարզութիւնը և սրահաղութիւնը, բայց միևնոյն ժամանակ՝ այդպիսի խաղերի ներգործութիւնը այլ է։ Դուք չուտով կը համոզուիք, որ մանուկի հետ այդպէս վարուելով նպաստում էք նրա կազմուածքի սմրանալուն, մանուկի առողջութեան վերականգնելուն. դուք մեծ փոփոխութիւններ կընկատէք դէպի լաւը։

Մանուկին դեղ էիք տալիս, բայց հետևանքը եղաւ անօգուտ, դուք ստիպեցիք նրան մարմնամարզութեամբ պարապել և մինչև անգամ զբօսնելով մաքուր օդ ծծել, բայց և այնպէս իզուր։ Ինչու։ Որովհետև մանուկին ուրիշ բան է հարկաւոր, որի վրայ դուք ուշադրութիւն չէիք դարձրել, այդ բանը հաճոյութիւնն է, մանուկին հարկաւոր է ուրախութիւն, որից նա զրկուած է։

Պատկերազարդ գրքոյկներով զբաղմունքը կամ գեղեցիկ տիկնիկներով պարապելն, մանուկի համար հաճոյութեան աղբիւր չեն կարող լինել։ Այդ հաճոյութիւնը մասամբ կենդանական է, որի ներգործութիւնը «ջղային ոյժերի» վրայ կոպիտ է, և ընդունակ է տարածուելու բոլոր գործարանների և մկանունքների մէջ։ Այդ այն հաճոյութիւնն է, որից աչքերը փայլում են, այտերը կարմրում, շնչառութիւնը ուժեղանում։ Դա ամբողջ մարմնի ուրախութիւնն է, կամ ինչպէս հուսմայեցիները ասում են «alacritas»ն է։

Ֆիզիկական վարժողութիւնները միայն կարող են մանուկին այդ ուրախութիւնը պատճառել, միայն անհրաժեշտ է իմանալ թէ ինչպիսի վարժողութիւններ պէտք է ընտրել։

Բաւական չէ, որ վարժողութիւններով մկանունքներին գործ տալ, շարժողութիւն պատճառել, բաւական չէ որ վարժողութիւններից բոլոր գործարանները և մկանունքները հաւասարաչափ աշխատին, այլ անհրաժեշտ է որ ուղեղը այդպիսի վարժողութիւններից ևս օգուտ քաղէ, հարկաւոր է որ վարժողութիւնները հաճոյութեամբ կատարուին։ Առաջարկել մանուկին վարժողութիւն առանց հաճոյութեան, դա մանուկի վրայ ունեցած հոգատարութեան մեծ պակասութիւնն է, դա առողջապահութեան սխալմունքն է։

V

Հաճոյութիւնը մանուկի կազմուածքի անհրաժեշտ

* Տես. Տարազ № 38, 39.

պահանջողութիւնն է, բայց հաճոյութիւնը կարող է անմեղ կամ արատաւոր լինել և եթէ մանուկին ողջամիտ հաճոյութիւններ պատճառող վարժողութիւններից զրկել, ինքն երեխան բնազդմամբ, ակամայ կարող է դիմել արատաւոր հաճոյութիւններին։

Իսկ խելացի վարժողութիւնները՝ հաճոյութիւն պատճառելով կարող են մանուկի բնական պահանջողութիւնները բաւականացնել։ Այդպիսի վարժողութիւնները կարող են պատասխարել մանուկին թէ՛ էական բնազդական, բայց և այնպէս երկիւղալի ընթացքից, ինչպէս որ կարող են լինել փչացած ընկերի խորհուրդները։ Ահա սրանով կարելի է բացատրել փիզիքական վարժողութեան ազդեցութիւնը երիտասարդների բարոյականութեան վրայ։

Բոլոր մանկավարժներն էլ միաձայն հաստատում են, որ հրապուրանքով վարժողութեամբ զբաղող աշակերտները, աւելի են ապահոված բոլոր ուսումնարանների մէջ տարածած, առողջութիւն ապականող անբարոյական սովորութիւններից։

Coubertinը «Անդլիական դաստիարակութիւն» վերնագրով յայտնի գրքի մէջ չեչտելով մատնանիշ է անում անդլիացի աշակերտի բարոյական վսեմութիւնը միւս ազգերի համեմատութեամբ և շատ իրաւացի է բացատրում, որ դրա պատճառը, Սակսոնեան ցեղի դէպի խաղերն ունեցած սէրն է։

Այժմ հարց է առաջանում, թէ ինչպէս է ներդրծում այդ նախապաշտպանողական միջոցը, որի այժը բոլորն էլ միաձայն ընդունում են։ Աւելի է տարածած հեռաւոր կարծիքը թէ մարմնի վարժողութիւնները, ջղային այժերին դէպի մկանունքները ուղղելով, արգելում են նրանց (ջղային այժերին) զգացողութիւնը զրդռելու։

Որքան էլ որ այդ բացատրութիւնը հաւանական լինի, այնու ամենայնիւ էականապէս փաստերի հետ չէ համաձայնում, քանի որ չափաւոր վարժողութիւնները չեն կարող զգացողութեան զրդռումը թուլացնել, իսկ ընդհակառակն սաստկացնում են։ Ֆիզիքական վարժողութիւնները չեն կարող զգայողութիւնը հանդարտացնել, եթէ միայն վարժողութիւնները վերին աստիճանի հոգնածութեան չեն հասնում, երբ մարդս կարող է ուժասպառ լինել։ Այդպէս վարելով կարելի է ծայրահեղութեան հասնել, որ առողջապահութեան նպատակից հեռու է և մի վտանգը աւելի երկիւղալի վտանգի փոխարինելու։ Գործնական առողջապահութեան նպատակն է, կազմածքի բոլոր գործարանների մէջ հաւասարակշռութիւն պահպանել և ոչ թէ մի գործարանի ընթացքը դանդաղացնելով կամ բոլորովին խափանելով՝ միւս գործարանների ընթացքը սաստկացնել։

Մեր ժամանակներում ասում է բժիշկ F. Lagrange, Լիցէօներում piquet անունով մի պատիժ կար։ Պատժւած աշակերտը զբօսանքի դահլիճում լուռ ու մունջ կանգնում էր անկիւնում, երեսը դէպի պատը դարձած։ Այդպիսի պատիժը մանուկների առողջութեանը վնասակար ընդունեցին և փոխարինեցին մի այլ պատժով։ Ցանցաւոր աշակերտին ստիպում էին մի ժամ չարունակ 10 քայլ համարելով առաջ և յետ քայլել։

Մթթէ կարելի է ենթադրել, որ յանցաւոր աշակերտը այդպիսի—լուռ ու միայնակ զբօսանքից, որի ժամանակ ժպտալն անդամ արգելւում է, կարող է մի որ և իցէ բարոյական օգուտ բաղել։ Երևի նա մի ժամւայ ընթացքում կարող է մի քանի վերստ քայլել, և ոչ մի ուրախալի յուզմունք նրա ուղեղի թմրած խորշերը չէ կարող զարթեցնել, նա պատժի ազդեցութեամբ մնում է մաայլ և ախուր զրպեան մէջ։

Բայց դուք կարող էք ասել թէ դա մանուկի զբաղրոցական կեանքի մի դէպք է, դա պատիժ է և ուրախութեան մասին խօսք անդամ չըլէք է լինի։ Բայց այժմ ինձ բացատրեցէք, ինչով է դանազանւում այդ պատիժը մեր ուսումնարաններում ընդունւած մարմնամարզական վարժողութիւններից։ 40 մանուկ երեք կարգ անշարժ կանգնում են և իրանց հայեացքը ուսուցչին դարձրած հրամանի են սպասում, յետոյ ուսուցչի տւած նշանով յանկարծ բոլորն էլ միասին գլուխը շարժում են նախ աջ, յետոյ ձախ, բարձր ձայնով համարում են մէկ, երկու, երեք, ձեռքերը ձգում են, յետոյ բարձրացնում են և վերջապէս ցածրացնում, դրանից յետոյ հերթը ոտներին է ընկնում, վերջը իրանին։ Ասացէք խնդրեմ, այդպիսի չէզոք հնազանդութիւնից, ինչ հաճոյութիւն պէտք է զգան մանուկները. այդ սառը հրահանգից, այդ անտեղի շարժողութիւններից, որ վրայ անուշադրութիւնն անդամ կարող է նրանց կանոնաւոր կատարումը խանգարել, մանուկները ինչ օգուտ պէտք է ստանան։

Եթէ մանուկը մեքենայ լինէր, ի հարկէ որ հասկանալի են այդպիսի շարժողութիւնները, մեքենայ-մանուկի համար բաւական են այդպիսի շարժողութիւնները։ Բայց մանուկը բացի մկանունքներից, հրապուրման և ուրախութեան պահանջողութիւններ ունի։ Իսկ ձեր մարմնամարզութիւնը միայն զզւանք և ձանձրութիւն են պատճառում։ Ուրեմն հասկանալի է, որ այդպիսի անտեղի վարժողութիւնները պէտք է փոխարինել «հաճոյք պատճառող մարմնամարզութեամբ» միայն։

Դասատան մէջ երկու տեսակ «վատ» ասւած աշակերտներ են նկատւում։ Մի տեսակ աշակերտները ուրախութիւն և հաճոյութիւն են սիրում, միւսները ծոյլ են և անտարբեր։ Առաջի կարգին պատկանող աշակերտները համարեա միշտ չարութեան մէջ են նկատւում և իրանց ադաղակներով և այլ չարութիւններով դասատան կարգապահութիւնը խանգարում։ Ամեն մի դէպքից, ամեն մի երևոյթից աշխատում են ուրախութիւն որսալ, այդ է նրանց միակ պարապմունքը։ Այդպիսի աշակերտը անսանձ անունով է յայտնի, նա յաճախակի է պատժւում, բայց այդպիսիները սովորաբար արատաւոր չեն լինում, նա իր չարութեան մէջ նախապաշտպանողական միջոց է դանում, որ մի որոշակալ չափով ապահովում է նրան վատ մտածմունքներից։ Նա խարէութեան մէջ ուրախութիւն, արգելւած ուրախութիւն է որոնում և որի մասին պարզ խոստովանում է։ Նա դասի ժամանակ անմիտ ծիծաղներով է զբաղւում և ամենից չատ հաճոյութիւն է պատճառում իր զրօսանքի դահլիճին։

Բայց իսկական արատաւոր մանուկը երկրորդ տեսակին է պատկանում, անտարբեր և ծոյլ աշակերտը աւելի է վնասակար. նա թէ խաղերին և թէ ամենքներին հաւասարաչափ անտարբեր է և մինչև անդամ նրա կոպիտ և ախուր երեսը չէ կենդանանում թէ դասատան մէջ և թէ զբօսանքի դահլիճում։ Նրան պատժում են ոչ թէ ծիծաղելու սովորութեան, այլ վերին աստիճանի ծուլութեան համար, կոպիտ ծուլութեան համար, նրա մէջ չէ նկատւում ոչ հրապուրման և ոչ ուրախութեան բոլորներ, նա իր ուրախութիւնը չէ կարող

խոսաովանել։

Մանուկի ուղեղը ուրախութիւն է պահանջում այնպէս, ինչպէս որ թոքերը թթուածին են պահանջում, որտեղից էլ որ լինի. նրան ուրախութիւն է հարկաւոր։ Իսկ մեզանից է կախուած այդ ուրախութիւնը միացնել առողջապահական ու օգտաւետ գործողութեան հետ։ Դրանք ֆիզիքական վարժողութիւններն են։

Մեր մանուկների ֆիզիքական և բարոյական առողջութեան համար մենք պահանջում ենք. դրաւիչ վարժողութիւններ և խնդրում ենք, որ մեր դպրոցների ծրագրներում մտցնել հաճոյութիւն պատճառող մարմնամարզութիւն «մարմնամարզութիւնը խաղերի մէջ»։ *)

D.

*) La Nouvelle Revue. Janv. 1890. Dr. F. Langrange. L'Hygién de l'exercice chez les énfants et les jeunes gens. Вѣст. Вос. М. В.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի հոկտեմբերի 17-ին Թագաւոր Կայսեր, Թագուհի Կայսրուհու և Օգոստափառ Որդոյ վառանդից հրաշալի փրկութեան տարեդարձի օրը՝ գոհացողական մաղթանքներ կատարուեցան Սիօնի ռուսաց մայր-եկեղեցում և հայոց վանքի մայր եկեղեցում։ Վաղ առաւօտից քաղաքիս բոլոր փողոցները դրօշակներով էին զարդարած, իսկ երեկոյեան քաղաքը լուսաւորուած էր։

—

Մեզ գրում են Գանձակից, որ՝ օր օրի վրայ աւելանում է այնտեղից արտահանութեան նիւթերը. Դինին նոր-նոր շուկաներ է գտնում, իսկ խաղողը հասաւ այս տարի մինչև Պետերբուրգ. այդ գլխաւորները։ Արտահանւում են մեծ քանակութեամբ ամեն օր այնպիսի հասարակ բաներ ինչպէս կանաչեղէնք և նոյն իսկ ծաղիկներ։ Յայտնի ծաղկանոց ունեցող պ. Կարապետ Երէցփոխեանը իր համար չատ շահաւէտ արտահանութեան նիւթ է տեսել այդ դեղեցիկ առարկան, որ ամեն օր բուրիանոց խոշոր փնջերով ուղարկւում է Բաքու, որը բուսականութեան կողմից անատամ է։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը կարգադրել է, որ բոլոր բարեգործական ընկերութիւնները իւրաքանչիւր ամիս ներկայացնեն փողերի ելից և մտից հաշուի ցուցակը։

—

Մեզ գրում են Գանձակից, որ Դեր. Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանը անցեալ տարի իր հովուական այցելութեան ժամանակ նկատելով Բանանց գիւղի մօտ Երկրորդ թարգմանչաց Վանքի անխնամ և անտէր վիճակը, Սեանից հրաւիրեց բարեխորհ Շահրիզեցի Գէորգ վարդապետին յիշեալ վանքում վանահայրութիւն անելու, որ և անցեալ ամիս մի տարկաւագի հետ եկաւ և սկսաւ մեծ եռանդով կարգի բերել վանքը, որ բաւական հարուստ է և ընտիր դիրք ունի։

—

«Каспій» ասելով Բագուում նաւթային յայտնի „Էսալիանդէր“ ֆիրման իրան սնանկ յայտարարեց, պարտքը հասնում է 280,000 ր։

—

«Մշակը» հաղորդում է, որ հայ դերասանուհի տիկին Ալմա Սաֆրազեան իր մարդու դերասան Սաֆրազեանու հետ եկել է Թիֆլիզ և դիտաւորութիւն ունի մեր քաղաքում մի ներկայացում տալ թիւրքերէն լեզուով։

—

«Новое Время» լրագրի ասելով դեղատնային սակագինը չուտով վերանայելու և փոփոխութեան է ենթարկւելու հասարակութեան ցանկացածին մտքով։ Օրէնքով իւրաքանչիւր տարի այդ սակագինը պէտք է ներքին գործերի մինիստրութեան բժշկական խորհուրդը վերաքննէր, բայց զանազան հանգամանքների պատճառաւ վերաքննութիւնը վերջին ութ տարուայ մէջ չէր կատարւել։ Այժմ այդ դժուար խնդիրը յաջող է վճռուած։ Ներքին գործերի մինիստրի հրամանով առանձին յանձնաժողով էր կազմած, որին առաջարկուած էր այդ հարցը ամեն կողմից էլ քննել, դեղերը էժանացնելու համար։

Յանձնաժողովի անդամ բժշկական խորհուրդը ընտրել էր բժշկական դեպարտամենտի տեսուչ բժշկապետ Բագոզինին, որի գործունէութիւնը վերջին ժամանակ մի կարգ բժշկական ձեռնարկութիւնների մէջ երաշխաւոր կարող է լինել, որ բոլոր դեղերի գների էժանացնելու մասին լրագրների հաղորդած լուրերը պէտք է չուտով իրագործւին։

—

«Մշակում» կարդում ենք հետեւեալը. Մենք առիթ ունեցանք այս օրերս տեսնել մի հայ երիտասարդի նկարները հարթակաւոր ձեռագործի համար։ Այդ նկարները ներկայացնում են հայոց ծաղկատուներ, մեծ ճաշակով նկարուած։ Թիֆլիզաբնակ երիտասարդ նկարչի ազգանունն է Արտաւազդ Միրզայեաց։ Ինքն երիտասարդը նիւթական միջոց չունի փարազրել տալ իր տետրակը, այդ պատճառով ցանկալի է, որ կամ մէկը գտնւի, որը համաձայնւէր առնել երիտասարդից նրա հրատարակութեան իրաւունքը և կամ յանձն առնէր հրատարակութեան ծախսերի մասին հոգալը։

—

Եգիպտոսէն կըգրէն Ալեքսանդրիայի թէ Հապէշստանի Մէնելիք թագաւորն արքայական հրովարտակով արծաթեայ մի խաչ ղրկած է ի Գահիրէ որ նուէր է Դեր. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեանի, նախորդ առաջնորդն Եգիպտոսի։

Մենելիք թագաւորը նոյնպէս մի պատուանշան է նուիրած է Եգիպտոսի ազգայիններէն Պօղոս էֆէնտի Կարապետեանի։

—

Կ. Պոլսի Ամբասսանիչ տաճարը մի որոշմնագրով ապրարարեր է ոսոիկանութեան պաշտօնեայներին որ ձերբակալեն և Եղեռնագատ տաճարի բանան յանձնեն Տիգրանակերտի հայ-կաթոլիկ եկեղեցու Էթորպա անուն քահանայն որ փախած է։ Այս քահանայ մին է այն անձերէն, որոնք տակէ 4 տարի առաջ մի շաբաթ օր, նոյն եկեղեցու մէջ, Առաջնորդարանի դուռը կտրելով զողցած էին հայ կաթոլիկների առաջնորդ Ֆէրահեան Յովսէփ Գերասիմոսի գրամն և գոյքերը։

—

Ազատամտութեան հայ լրագիրների մէջ կարդում ենք.

Պատրիարքական առժամեայ փոխանորդ կարդուեր է Սրժ. Գաբրիէլ Վ. Ճէվահիրճեան. Ամեն. Պատրիարքը մի նամակ գրելով իրեն, հրաւիրեր է զինք պաշտօնի գլուխն անցնել։

Իսկ նախորդ Պատր. Փոխանորդ Դեր. Գէորգ Ծ. Վ. Իւթիւճեան որ Ն-

դիպատոսի հայ դաղթականութեան համար Առաջնորդ կարդուեր է, հոկտ. 9/21-ին իր պաշտօնատեղին Եդիպտոս պիտի մեկնի. առայժմ մի քանի օր ալ կը մնայ Պատրիարքարան՝ ընթացիկ գործերի կարգադրութեան համար։

—

դեղարուեստ

Թատրոն

Հինգշաբթի, 17-ին հոկտեմբերի Օգոստափառ ընտանիքի վտանգից հրաշալի փրկութեան տարեդարձի օրը, Թիֆլիզի քաղաքային թատրոնում Ռուսաց ներկայացման սկզբում դրամատիքական ամբողջ խումբը ազգային չոքերով զգեստաւորուած կատարեց „Боже Царя Храни“ ժողովրդական օրհներգը. հասարակութեան բուռն ծափահարութեամբ և պահանջով խումբը կրկնեց օրհներգը։ Այնուհետև ներկայացրին «Русская свадьба» ժողովրդական պիէսան. ուշադրութեան արժանի էր երգեցիկ խումբը, որ մեծ յաջողութեամբ երգեց պիէսայի մէջ եղած ժողովրդական երգերը։

—

Միևնոյն օրը Օգոստափառ Ընտանիքի վտանգից հրաշալի փրկութեան տարեդարձի աւիթով, հայ դերասանական մշտական խումբը ազնուականների բանկային թատրոնում ներկայացրեց «Փարիզու աղքատներ» վերնագրով դրաման։ Ահա մի պիէսա, որի մէջ պատկերանում են կեանքի բոլոր ալեկոծութիւնները։

Մարդկային հասարակութեան մէջ անթիւ ու անհամար են խայտապղէտ ծայրահեղ երևոյթներ։ Մի մարդ՝ երբ իր իդէալը ու անհատական ոյժը դանում է միմիայն մամոնայի մէջ, որով նրա ամբողջ բարոյական աշխարհը մի կոպտացած, զարհուրելի թշուառ պատկեր է ներկայացնում՝ այդպիսին միշտ հոգեպէս աղքատ է և վատ տարը հասարակութեան համար։ Նա ամենևին խարութիւն չի դնի միջոցների մէջ. նրա համար ամէն բան սուրբ է համարուում, միմիայն ինքը փող հաւաքէ։ Խաբել ուրիշին, կողոպտել ու անբարոյական միջոցների դիմել նրա համար ոչինչ նշանակութիւն չունին։ Նա գոյութեան կռիւը հասկանում է ճիշտ այնպէս, ինչպէս բանականութիւնից զուրկ կենդանիների մէջն է գործադրուում. Նրա համար խիղճ, հասարակական կեանքի բարոյականութիւն ու պատիւ ասած հասկացողութիւնները օտարոտի են թւում։ Այդպիսի մարդը բարոյականութիւնից զուրկ, չոր, կոչտացած ու դէպի ուրիշներն անխնամ հրէշ է դառնում։ Դրանք հասարակական ճշմարիտ կեանքի համար վնասակար են. որովհետև նրանք ինքնուրոյն ազնիւ աշխատութեան ու ապրուստի ոչմի երաշխաւորութիւնչունին։ Փարիզը, որը Ֆրանսիայի սիրտն է կազմում՝ իր միահեծան Լուդովիկոսներից սկսած մինչև այսօր, դեռ էլի լի է այդպիսի հրեշաւոր կեանքի մոլի, անսիրտ բուրժուաներով։ Բայց բազմաթիւ են նաև բարոյականութեան տիպարի տէր անհատներ, որոնք անձեռնհաս լինելով ապօրինի, պիղծ միջոցների դիմել՝ սովից սոսկալած կերակրում են հարուստների սեղանից դուրս թափած ոսկորների մէջի եղած ծուծով և կամ նրանց վրայ մնացած մսի կտորներով։ Անհատը, որը չնայելով քաղցածութիւնից ուշքն է անցնում և վճռում է իրան ուղարով թունաւորել, բայց նրա համար բարձր մարդկային բարոյականութիւնը, պատուի տէր լինելը իր կանացի տեղով՝ մարմնացած հասկացողութիւններ են։ Թէև աղքատ օրիորդ (ս. Սիրանոյշ), բայց հոգով, բարոյականութեամբ, կամքով, տոկունութեամբ մաքուր ու բնական ճաշակով հարուստ, նա չի ուզում կոմսի կամ զոնդան տիպողների տէր մարդու գնալ, այլ աղքատի, բայց հոգով ու զաղափարով հարուստի։ Նա իր բաղդաւորութիւնը այդպիսի վիճակի մէջ է դանում։ Այո, մի հոգով, որսով ու խղճով կոչկոճած, բարոյապէս կոպտացած հասարակութիւն կարող է անտարբեր վերաբերուել քաղցից յուսաջացած այդպիսի արատակարգ երևոյթներին։ Ցիլինդրը կամ շլեատոն գլխին, կապի նման ակնոցները աչքին՝ քաղցած լինել. դրանից էլ անարգ ու քաղաքավար կերպով ըստրկական անտանելի վիճակ չի կարող լինել։ Դրանք մի երկրի անհարազատ կրթութեան ու դաստիարակութեան կեղծ սիստեմայի արդասիք են։ Սակայն մենք տեղի ազգութեան պատճառաւ կարճ ենք խօսում։

Անցնենք այժմ պիէսայի դերակատարներին։ Բէմ դուրս գալ մի դէրի մէջ՝ նշանակում է պիտի այնքան հանճարեղ լինել, որ մի այլ անհատի հոգեկան և բարոյական կեանքի ճիշտ պատկերը ներկայացնել հասարակութեանը՝ հայելի դառնալ նոյն հասարակութեան կեանքի համար։ Վճռել բեմի վրայ մի հասարակական կամ ազգային կենսական հարց ու մարմնացնել նրան, ուստի դրա համար հարկաւոր է, որ դերակատարը ինքը նախ մտաւորապէս հասունացած բազմակողմանի լինի. այլապէս նա միշտ կը տուժէ իր արհեստի մէջ։

Այդ երեկոյ պարոն Թուրեան, որ Վիլլոէօնի գրագրի դերն էր կատարում և որը պիէսայի սլրօգմատիզմը կամ ազն էր կարելի է ասել՝ պարոնը հիանալի խաղաց։ Պարոն Թուրեանը հասկացել էր լիովին պիէսայի ներքին հոգեբանական կապը։

Տիկին Սիրանուշի խաղի մի տեսարանը ամէն բանից գերազանցեց. այն է՝ նրա ածխածնով թունաւորուելը և յուսահեռական անպունդին մօտենալը քաղցից ստիպուած։

Թէև նա տաղանդաւոր դերասանուհի է՝ դա արդէն հասարակութիւնը խոստովանում է, ցանկալի էր որ պատուելի տիկինը ընդհանրապէս թողնէ իր միակերպ (монотонно) ու անտեղի չարժմունքները, բազմիցս ի զուր հեծկլտանքը և լացկան ապի ձայնը։

Պ. Պետրոսեան նաւապետի դերում բաւական յաջող և դերը լաւ էր սորել, բայց հոգեբանական կողմից զուրկ էր բոլորովին։ Շատ տեղերում պարոնը ի զուր ճչոցներ էր հանում բեմի վրայ, մինչդեռ իր դերի բնաւորութիւնը կամ միմիկան այդպէս չէր պահանջում։ Տիկին Մելիքեան այս անդամ բոլորովին վատ էր, կարծէք փայտ կուլ ուած լինէր բեմի վրայ. միմիայն ուշարարի բառերն էր կրկնում։ Պ. Տէր-Դաւթեան Պիկոի դերում, որը մի զիւղացի ներկարար էր՝ կարելի է ասել հրաշալի էր։ Մենք երկար չենք խօսի պ. Տէր-Դաւթեանի մասին, որովհետև նա իր բնական ձիրքով ու տաղանդով մեր հասարակութեանը յայտնի է արդէն։ Մնացածները կարելի է ասել

բաւարար էին, թէև պակասութիւններ կային։

Բայց ընդհանրապէս պիտի խոստովանել, որ այս անգամ հայ դերասանական խմբի բոլոր անսանները, թէև իր ոյժերից բարձր պիէսա էր, այնու ամենայնիւ լաւ ապաւորութիւն թողեց հասարակութեան վրա։

Թատրոնը լի էր բազմութեամբ։

Ղ.

—

Այսօր կիրակի հոկտեմբերի 20-ին հայ դերասանական մշտական խումբը Ազնուականների Բանկային Թատրոնում ներկայացնելու է „Բայր Թերեզա“ դրաման։ Սկիզբն է 7½ ժամին երեկոյեան։

—

Նոտ հեռաքրքրական բացատրութիւնների հետ ենք մենք ծանօթանում կարդալով Թատրոնական կոմիտեի անդամ Յովհաննէս Յովհաննիսեանի «Тиф. Лист.»-ի լրագրին ուղղուած նամակը։ Պարոնը հերքում է „Փոքրիկ Թերթոնի“ հեղինակի կարծիքը, երբ թէ մեծ սխալմունք է ասել Թատրոնական կոմիտեաը որ ժամանակին չէ դիմել Թատրոնական գործերի մէջ հմուտ՝ թիֆլիզում գտնուած յայտնի անձինքների աջակցութեանը։ «Թոյլ ասէք ինձ երբեւ կոմիտեի անդամին», ասում է պ. Յովհաննէս Յովհաննիսեանը, «ծանօթացնել լսմբագրութեանդ, անյայտ գործի էութեան հետ. գուցէ ես կարողանամ համոզել, որ մենք Թատրոնական կոմիտեի անդամներս ստիպուած էինք բացառիկ դերը բռնել և մեր առաջի քայլերը պէտք է անյաջող լինէին և սխալ։ Այդ բանում կոմիտեաը մեղաւոր չէ, այլ Թատրոնական գործի մեր հինաւուրց գործիչներների անտարբերութիւնը, որոնք հէնց առաջին մեր քայլերից ոչ թէ միայն օգնութիւն չտալով հեռացան մեզանից, այլ և կատակելով ամեն տեղ էլ գոռացին, որ մենք, կոմիտեի անդամներս, Թատրոնական գործին ոչ մի օգուտ չենք կարող տալ։ Բոլոր ամառ ժամանակ կոմիտեաը զբաղուած էր յոգուտ Թատրոնական փոնդին ստորագրողներից վոդեր հաւաքելով և միայն օգոստոսին կոմիտեաը սկսեց խումբ կազմել և կոմիտեաը բոլոր ջանք գործ դրեց տեղական լաւ ոյժերին հրաւիրելու։ Անկեղծութեամբ եմ ասում, բոլորն էլ կասկածանքով էին վերաբերուում և այդ պատճառաւ դերասաններից շատերը մեր պայմանները չընդունեցին և խմբին չմասնակցեցին։ Այսպիսի հանգամանքների մէջ խումբը կազմակերպելուց յետոյ մենք միայն օգոստոսի վերջերին դարձանք ընպէրտուարի ընտրողութեանը։ Հինգ յայտնի անձինքներ հրաւիրեցինք, գրականական կոմիտեի համար, բայց նրանցից երեքը, պ. Գ. Սունդուկեանը. պ. Աբգար Յովհաննէսեանը և երդւեալ հաւատարմատար պ. Յակոբ Յովհաննիսեանը բոլորովին մերժեցին գրականական կոմիտեին մասնակցելուց. այնպէս որ մենք ստիպուած էինք լնքներս քրքրել պիէսների ցուցակը, պիէսներ բերել տալ, կարդալ և ընպերտուարը կազմել։ Կոմիտեին ներկայացուած երեք նոր պիէսներից, միայն մինը (պատմական դրամա) մենք հաւանեցինք և շուտով կներկայացուի, այնպէս որ ստիպուեցանք առայժմ պիէսներ թարգմանել ռուսերէնից և ֆրանսերէնից։ Յայտնի է որ մեր ընպերտուարը ազքատ է, բայց միւս կողմից հէնց ընպերտուարի պիէսներից շատերը անդրկովկասեան շրջանի Թատրոններում ներկայացնելու համար չէին թոյլ տուած, ինչպէս որ ներքին գործերի մինիստրի վերջին շրջաբերական է պահանջում։

Անցեալ տարիներում ներկայացրած պիէսները ստիպուած էինք թոյլատրութիւն խնդրելու համար երկու օրինակ արտագրել և ներկայացնել նախ ցենզուրական կոմիտեին և երկրորդ Կովկասեան Կառաւարչապետի քաղաքացիական մասի դիւանատան։ Այժմ հարց է առաջանում, մեղաւոր է արդեօք Թատրոնական կոմիտեաը, որ Հայկական Թատրոնի ընպերտուարը առանց բացառութեան առ այժմ Թարգմանական դրամաներից է կազմած, կոմիտեաը նմանապես չը կարողացաւ ներկայացնել մեր տեղական կեանքից ընդամենը վեցից ոչ աւելի պիէսները։ Կոմիտեաը շատ լաւ էր հասկանում, որ պիէսների ներկայացման յաջողութիւնը, բացի առ այժմ ունեցած դերասանների ոյժերից, գլխաւորապէս կախում ունի ընկիսսրի հմտութիւնից, վարձատրութիւնից և Թատրոնի մասի լաւ ուսումնասիրութիւնից։ Կոմիտեաը դեռ ամառ ժամանակ հեռագրով Բօլժոմ դիմեց պ. Պրիդոնեանին, ընկիսսրութիւնը ընդունելու, բայց նա հեռագրով հրաժարուեցաւ, յետոյ կոմիտեաը դիմեց Թատրոնական գործերին հմուտ հինաւուրց գործիչ Իշխան Հ. Ամատունուն, նա ևս հիւանդութեան պատճառաւ հրաժարուեցաւ. այնպէս որ մենք ստիպուած ընկիսսրութիւնը առաջարկեցինք մեր դերասան պ. Պետրոսեանին, որ երբեմն դերասանի համար դժուար է երկու դժուար պարտաւորները ի միասին կատարելու։ Մենք գոնեա յոյս ունինք, որ Իշխան Ամատունին առողջանալուց յետոյ կընդունի ընկիսսրութիւնը, որով և մենք կկարողանանք դրա վերաբերմամբ սխալմունքներից և անյաջողութիւններից։ Մեր ասածից պարզ է, որ Թատրոնական կոմիտեաը իր ոյժերի վրայ յոյս չէր դնում, այլ բոլորի դռները բաղխում էր, օգնութիւն էր խնդրում, բայց ոչ մի դուռն բաց չեղաւ, և մենք մեր ոյժերով ստիպուած էինք գործել ցերեկ և գիշեր, ուշադրութիւն չդարձնելով բամբասանքի և թէ այլ և այլ դատարկաբանների ծաղրածութիւնների վրայ։ Մենք յոյս ունինք սեզոնի վերջում հաստատել, որ թէ Թատրոնական կոմիտեի անդամների և թէ դերասանների բարեխիղճ համերաշխ գործունէութեամբ, մեր հայկական Թատրոնը վառաւոր ապագայ կունենայ, իսկ առ այժմ չկարելի որ սխալմունքներ կարելի է անել, անսխալական է միայն նա, որ ոչինչ չէ գործում“։

Իրաւացի է, միայն անգործ մարդիկ չեն սխալուում, Թող չըվիճաբանեն Թատրոնական կոմիտեի անդամները, անուշադիր Թողնելով դատարկաբանների բամբասանքները և շարունակեն սկսածը։ Հասարակութեան մինչ ցայսօր յայտնած համակրութիւնը կարող է արդէն գրաւական լինել Հայկական Թատրոնի գոյութեան ապահովութեանը։ Այժմ գործող դերասանական խումբը պակաս չէ ոյժերով հասարակութեան սպասելիքն արդարացնելու։ Հարկաւոր է միայն խմբի ոյժերին համար լուրջ պիէսների ընտրութիւն և դերերի համապատասխան որոշումն։ Կոմիտեի անդամների և դերասանական խմբի համերաշխ և ներդաշնակ գործունէութիւնը Հայկական Թատրոնին վառաւոր ապագայ է խոստանում։

—

ՕՊԵՐԱ.

Ամսոյս 15-ին տեղի ունեցաւ առաջին օպերայի ներկայացումը—Թիֆլիզում առ այժմ գտնուած օպերաչին

երաժշտական ոյժերով։ Ներկայացրին „Ֆաուստ“ յայտնի օպերան, չնայելով որ Թիֆլիզի հասարակութիւնը շատ անգամ է տեսել այդ օպերան և լսել երաժշտական աւելի մեծ ոյժեր, այնու ամենայնիւ Թատրոնը լի էր բազմութեամբ—մի իրողութիւն, որ արժանի է ուշադրութեան։

Ներկայացուեց երկրորդ գործողութիւնը պատրաստի երգեցիկ խումբ և բալետ չունենալու պատճառաւ։ Դերակատարներից մեծամասնութիւնը սիրողներ էին. տիկին Պերարովա (Մարթա) պ. Մազատեան (Ֆաուստ) և Եղիազարեան (Մէֆիստոֆէլ)։ Իսկ հին յայտնի դերասաններից մասնակցում էին. տիկին Զարուդնայա (Մարգարիտա), օրիորդ Ալմազեան (Զիբէլ) և պ. Ֆրանկովսկի (Վալենտին)։ Ընդհանրապէս ներկայացումը շատ յաջող անցաւ, հասարակութիւնը շատ էր ծափահարում։ Տ. Զարուդնայն և Օր. Ալմազեան մի քանի անգամ դուրս կանչուեցան և ստացան թարմ ծաղիկներով լի զամբիւղ։ Երաժշտութիւնը կառավարում էր Մ. Մ. Իպոլիտով Իվանով, որը դիտաւորութիւն ունի Թիֆլիզում հաստատել ընկերական հիմունքների վրայ Ռուսաց օպերա։ Հոկտեմբերի 15 Ներկայացումը վորձնական ներկայացում էր և յիրաւի կարելի է ասել, որ վորձը կատարելապէս յաջողուեց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Խմբովս հանդերձ հրաւէրը ստացած լինելով Ռուսաստանի և արտասահմանի զանազան քաղաքներում Հայկական կօնցերտներ տալու՝ արդէն սկսել եմ նախապատրաստուել։ Բայց որպէս զի նախապատրաստութիւնս լինի բազմակողմանի և նպատակայարմար՝ դիմում եմ մամուլի աջակցութեան և ձեռնահաս անձանց ամենակերպ օժանդակութեան։

Յուսով եմ, որ բանիմաց և ձեռնահաս մարդիկ չեն մերժիլ իրանց աջակցութիւնը, այդ պատճառով էլ չտապում եմ քանի մի տեղեկութիւններ հաղորդել երաժշտական այդ ուղղևորութեանս մասին։

ա. Խումբը պէտք է բաղկացած լինի 40-50 երկսեռ անդամներից, որոնք կընտրեին համապատասխան իրանց առաւելութիւնների, ձայնի կըրթութեան և այլն և այլն։

բ. Երգերի ռեպերտուարը կազմած պէտք է լինի զուտ արևելեան եղանակներով մաղթանքներից, ազգային, քնարերգական և ժողովրդական երգերից։

գ. Խմբի անդամները կունենան երգերի համապատասխան հանդերձներ՝ պատմական, ժողովրդական և Կովկասային։

Շատ կըպարտաւորացնեն մեզ ժողովրդի մարդիկ՝ եթէ չուտով հաղորդեն արևելեան եղանակներով երգերը—հայկական կամ եւրոպական նոտաներով և կամ բերանացի։ Բացի սրանից կարևոր է նա և՝ թէ ինչ երգեր, ինչպիսի ժամանակ կամ ինչ տրամադրութեան մէջ է երգում ժողովուրդը և կամ ինչ աւանդական և պատմական բացատրութիւններ է տալիս այդ երգերին։

Հանդերձների մասին ևս ուրախութեամբ կընդունեմ զանազան տեղեկութիւններ և խորհուրդներ։

Ինչ վերաբերում է ուղևորութեան պայմաններին՝ վերջնականապէս դեռ չէ որոշուած. այդ մասին իր ժամանակին կըյայտարարուի։

Ուղղևորութեանս մասնակցել ցանկացող արանց և նա մանաւանդ կանանց խնդրում եմ դիմել ինձ գրաւոր կերպով հետևեալ հասցէով. Баку Шемахинская улица, д. № 1221., անձամբ—Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան Նախկին Ուսումնարանի Երգեցողութեան դասլիճը երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերն երեկոյեան ժամը 7—9, իսկ կիրակի տաւուօտեան ժամը 12—2.

Ընդունեցէք և այլն։

Յ. ԳԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

Ժամանակաւոր խմբ. բժշկապ. Դր. ՏԻՐԴՐԻԳՈՐԵԱՆՑ (Թիֆլիսեցի)

Հրատ. Տ. Նազարեանի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՕՐ

ԴԵՂԱՐԻՆՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ»

Պատկերազարդ հանդէսների

Տպագրում է ամեն լեզուներով **գրքեր**, *լրագրեր*, բլանկներ, *ՏՈՊՍԵՐ*, պատկերազարդ ամեն տեսակ հրատարակութիւններ՝ *իր վրայ առնելով* ԿԼԻՇԵՆԵՐԻ վրոնգրելու տալը, **ՊԱՏԿԵՐՆԵՐԻ** **նկարելը**, *ՄՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ*, **ԹՈՒՂԹ**, ԿԱՄԱՆԻՆ ու ԲՐՕՇԻՒՐ ԱՆԵԼԸ։

Հասցէն՝

Թիֆլիս,

Բարդ, ул. Художественная Типографія „АРОРЪ“.

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ **„ԲԵՐՄԷՅ“** *ՄԵԹՈԴՈՎ ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն լեզուներով ամենակարճ ժամանակամիջոցում* աշակերտներին ազատ խօսել սովորեցնելու նպատակաւ **դասեր են աւանդւում։**

Դանօվսկայա փողոց, տուն Շահնազարեանի, № 15

Կովկասի հնութիւնների, *տեսարանների* լուսանկար **ՊԱՏԿԵՐՆԵՐ—ՄԵԾԱԴԻՐՔ** 50 **Կ. ՓՈՔՐԱԴԻՐՔ** 25 **Կ.** *ցանկացողներին խնդրում ենք դիմել* **„ԱՂԲԻՒՐԻ“** *խմբագրատունը։*

Վարդան Լիսիցեանի

„ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ“

կանոնի համար, տեսը **№ 2.**

դիմն է 50 կոպ.

Վաճառւում է բոլոր գրախանութներում։ Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի՝ Тифлисъ, Вартану Лисицянъ։ Դուսարով գնողներին զիջում —25 օրինակի համար 10%, 50 օրինակի համար 20% և ճանապարհածախքը յօրինողի վրայ։ 3—3

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՒՐՍ

ԿՐԿՆԱԿԻ

ԻՏԱԼԱԿԱՆ

ՀԱՋԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Ի. Ե. ԲՐԵՆՆԷՐ

Ամբողջ կուրսը երկու ամսւայ ընթացքում։

Վճարն է ամբողջ կուրսի 40 ռ.

Հարցնել 8—11 ժ. առաւօտ. եւ 2—6 ժ. երեկոյեան, Եղիսաւետիանի աշտ. տուն № 25, վերին յարկ։ ամ. տ.

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ։ Дозв. Ценз. Тифлисъ 19-го Октября 1891 г. Тип. „Ароръ“ Т. Я. Назарьянъ Барят. ул.